ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

22.05.2025թ. **Պռոշյան բնակավայր**

2025թ. մայիսի 22-ին ժամը 11:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ «Օրենք», ինչպես նաև ՀՀ կառավարության 28.12.23 N2343-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով, ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյանի վարչական ղեկավարի նստավայրում՝ Անդրանիկի փող., 11 շենք հասցեում, տեղի ունեցավ Արմեն Մանուկյանի կողմից նախատեսվող հանդիսությունների սրահի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային լսումը:

Ներկա էին Նաիրի համայնքի, Պռոշյան բնակավայրի ներկայացուցիչները, բնակիչները, նախաձեռնողի լիազորված անձիք (Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և լուսանկարները կցվում են արձանագրությանը):

Ելույթ ունեցան՝

Հանրային քննարկումը բացեց **ՀՀ Նաիրի համայնքի Պռոշյանի վարչական ղեկավար Սևակ Գաբրիելյանը**: Ներկայացրեց հանրային լսման առարկան՝ Արմեն Մանուկյանի կողմից նախատեսվող հանդիսությունների սրահի կառուցապատման աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկման իրականացման կարգը՝ համաձայն կառավարության որոշման: Նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և կառավարության որոշման պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթում, տեղադրվել է համայնքապետարանի և գյուղապետարանի պաշտոնական կայքում և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցչին:

Նախաձեռնողի կողմից լիազորված անձ՝ Արթուր Կնյազյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեղադիրքը, ճարտարապետա-հատակագծային լուծումները, տեխնիկական ցուցանիշները: Նշեց, որ նախատեսվում է կառուցել հանդիսությունների սրահ, որի կառուցապատումը նախատեսվում է 1,2257հա մակերեսների վրա:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակող՝ Հրանուշ Ալեքսանյանը ներկայացրեց, որ մշակվելու է ՇՄԱԳ հաշվետվություն համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» օրենքի պահանջների, որը ենթակա է փորձաքննության: Նախատեսված են 2 հանրային լսումներ: Հաշվետվությունում կներառվի բոլոր այն միջոցառումները, որոնք շինարարության փուլում կիրառելով հնարավոր կլինի մեղմել և նվազագույնի հասցնել հնարավոր ազդեցությունները:

Շրջակա միջավայրի վրա հիմնական ազդեցությունը լինելու է փոշու տեսքով, որը կրելու է ժամանակավոր բնույթ: Շինարարության կազմակերպումը իրականացվելու է շին.կազմակերպման նախագծի պահանջներին համապատասխան:

Հնչեցին հարցեր կապված աշխատատեղերի, կառուցման ժամանակահատվածի հետ:

Սևակ Գաբրիելյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով, որ հանրային լսումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կկազմվի հանրային լսման արձանագրությունը, իսկ 5 աշխատանքային օրվա ընթացքում հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը կներկայացվի համայնքի ավագանուն և նախաձեռնողին:

Վարող՝ **ՀՀ Նաիրի համայնքի**
Պռոշյանի վարչական ղեկավար
Սևակ Գաբրիելյանը

Նախաձեռնող՝

Կոչոն
ՈՒՐԲԱԹ
18.04.2025

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոխարտգործնախարարների եռակողմ հանդիպումը միտված էր առաջ մղելու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում եռակողմ համագործակցությունը. ՀՀ ԱԳ

2025 թվականի ապրիլի 17-ին Թբիլիսիում Վրաստանի ԱԳ նախարար Մակա Բոչորիշվիլիի, Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Ադրբեջանի Հանրապետության ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ եռակողմ հանդիպում՝ արտաքին գործերի նախարարների տեղակալների մակարդակով: Հանդիպման մեկնարկին Վրաստանի ԱԳ նախարարի տեղակալ Լաշա Դարսալիան, Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը եւ Ադրբեջանի Հանրապետության ԱԳ.նախարարի տեղակալ Էլնուր Մամեդովը ողջունել են հարավկովկասյան երեք երկրների առաջին եռակողմ հանդիպումը եւ ընդգծել, որ երեք երկրներն ունեն միմյանց ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության հանդեպ հարգանքի վրա հիմնված համագործակցության շիրացված ռեժիմ: Հանդիպումը միտված էր առաջ մղել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել տարածաշրջանում կայուն զարգացմանն ու բարգավաճմանը: Ավելին, այս ոլորտներում համագործակցությունը կարող է խթանել ընդհանուր մարտահրավերների հաղթահարումը եւ, ի վերջո, նպաստել Հարավային Կովկասի տարածաշրջանում երկարաժամկետ կայունության հաստատմանն ու արագընթաց զարգացմանը: Հանդիպման ընթացքում զրուցակիցները փոխանակվել են մտքերով եւ համագործակցության հնարավոր ոլորտների վերաբերյալ տեսլականներով: Հանդիպման ավարտին, զրուցակիցները կարեւորել են հանդիպման դրական եւ կառուցողական միջավայրը, որը նախնական փուլ է՝ միտված վստահության ձեւավորման եւ երկխոսության ավելի բարձր մակարդակում շարունակությանը:

Արմեն Գրիգորյանը եւ Ջեֆրի վան Լեւենը անդրադարձել են ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության հեռանկարներին

Ապրիլի 17-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը Բրյուսել կատարած աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի անձնական գրասենյակի ղեկավար Ջեֆրի վան Լեւենի հետ: Զրուցակիցները քննարկել են անվտանգային իրավիճակը Հարավային Կովկասում եւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացը: Այս համատեքստում [illegible] ներկայացրել է ՀՀ Նառավարության կողմից իրականացվող

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի եւ ՀՀ կառավարության 2023 թ դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. մայիսի 22-ին՝ ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պողոշլանի վարչական ղեկավարի նստավայրում՝ Անդրանիկի փող., 11 շենք հասցեում, տեղի կունենա Արմեն Ամանուկյանի կողմից նախատեսվող հանդիսությունների սրահի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային լսումը: Հանրային քննարկումը կիրականացնի Պողոշլանի վարչական ղեկավար Սեւակ Գաբրիելյանը (կգ հասցե՝ proshyan2414@rambler.ru, +374 94 931717):

Շահագրգիռ հանրությունը քննարկումներին մասնակցելու համար կարող է գրանցվել նախօրոք՝ վերոգրյալ էլեկտրոնային փոստի միջոցով: Շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքները ներկայացվում են սույն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025թ. մայիսի 21-ին՝ ժամը 10:00-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) եւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն (փոփ. 28.12.2023թ., N 2343-Ն) որոշմամբ սահմանված կարգի, Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ Երեւան, Ասատուրի Դավթի փ. 87) տեղի կունենա «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից (հասցե՝ Երեւան, Աբովյան 68ա) ներկայացված՝ Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդ փողոցի 5-րդ նրբանցք, 7/4 հասցեում՝ Արարատյան ՕԿՁ տեղամասում, «Գառնի-Երեւան Միսկոմբինատ» ջրատարի վրա «Արարատյան ՕԿՁ» ՓՀԷԿ-ի կառուցման նախատեսվող գործունեության վերաբերյալ («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետ՝ հիդրոէլեկտրակայաններ՝ մինչեւ 1 ՄՎտ հզորությամբ) առաջին հանրային լսումը: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ զանգահարելով (+374) 91529237:

Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքները կարող են ներկայացվել բանավոր՝ հանրային քննարկման ընթացքում կամ գրավոր՝ ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հայմայնքի ղեկավարի կողմից հանրային լսման համար լիազորված անձ՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ-էկոլոգ Էլլադա Արամյան (էլ.փոստի հասցե՝ ellada.aramyan@yerevan.am հեռ. 011-514-263):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՄԱԳ եւ փորձաքննության մասին օրենքի 12-րդ հոդվածին համաձայնասխան եւ ՀՀ քաղաքաշինության ոլորտական կոմիտեի կողմից նախատեսվող՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Թատերական փողոց 3ա հասցեում Հովի. Աբելյանի անվան ոլորտական դրամատիկական թատրոնի կառուցման աշխատանքներ կատարելու վերաբերյալ Վանաձորի համայնքապետարանի շենքում 2025 թվականի մայիսի 21-ին, ժամը 11:00-ին (Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22) տեղի կունենա հանրային ծանուցում եւ քննարկումներ:

Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքնե-

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն Որոշման համաձայն

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՈՌՇՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22.05.2025թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Աշխատանքի վայր/բնակության հասցե Հեռ. համար	Ստորագրություն
1.	Լուսինե Հակոբյան	Համայնքապետարանի աշխատակ.	
2.	Ստեփան Հակոբյան	Համայնքապետարանի աշխատակից	
3.	Վարդան Աբրահամյան	Ջրի հասանելիության	
4.	Սուսաննա Գրիգորյան	Ջրային կոմբինատի գլխավոր մասնագետ	
5.	Դավիթ Հովհաննիսյան	Բնակիչ	
6.	Հերմինե Գրիգորյան	Բնակիչ	
7.	Յուրիկ Ալեքսյան	Բնակիչ	

8.	[illegible]	[illegible]	[illegible]
9.	[illegible]	[illegible]	[illegible]
10.	[illegible]	[illegible]	[illegible]
11.			
12.			
13.			
14.			
15.			
16.			
17.			
18.			
19.			
20			